ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 24.11.2023թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 33 (երեսուներեք) անդամից՝ 26-ը, (քսանվեցը):

(Գագիկ Նիկողոսյանը և Անահիտ Հովհաննիսյանը էլեկտրոնային նամակի միջոցով օրակարգի և դրա հարցերի վերաբերյալ ուղարկել են իր դիրքորոշումը՝ «կողմ» քվեարկելով):

Նիստին մասնակցում էին՝

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
1.	Սերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն
5.	Մարգարյան Լիլիթ	Գիտական քաղաքականության և նորորարության կենտրոնի տնօրեն
6.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
7.	Հովհաննիսյան Օֆելյա	Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ բ.գ.թ., դոցենտ
8.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ
9.	Դավինյան Աշոտ	Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրեն
10.	Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
11.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)
12.	Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր

13.	Մարտիրոսյան Լևոն	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
14.	Ավետիսյան Գայանե	Որակի ապահովման բաժնի պետ
15.	Մելքոնյան Լուսինե	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.,
16.	Ղուկասյան Լուսիկ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մանկ. գ.թ., դոցենտ
17.	Աղանյան Գևորգ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի սպորտի և արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
18.	Գասպարյան Արշավիր	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
19.	Հովհաննիսյան Անահիտ	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
20.	Մինասյան Ելենա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 4-րդ կուրսի ուսանողուհի
21.	Բեժանյան Մերի	Հասարակական գիտությունների ֆակուլտետի Սոցիալական աշխատանք մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
22.	Հակոբյան Աննա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեղագործական քիմիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
23.	Ադամյան Հասմիկ	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
24.	Շարոյան Մարիաննա	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
25.	Մխիթարյան Աիդա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 4-րդ կուրսի ուսանողուհի
26.	Ավդալյան Մարիամ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կանոնակարգի» հաստատման մասին

Հաղ՝ Գիտական քաղաքականության և նորարարության
կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

2. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կանոնակարգի» հաստատման մասին

Հաղ՝ Գիտական քաղաքականության և նորարարության
կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

3. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կանոնակարգի» հաստատման մասին

Հաղ՝ Գիտական քաղաքականության և նորարարության
կենտրոնի տնօրեն **Լ. Մարգարյան**

4. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

Հաղ՝ Մինչբուհական կրթության բաժնի պետ **Ա. Դավինյան**

5. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Որակի ապահովման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

Հաղ՝Որակի ապահովման բաժնի պետ **Գ. Ավետիսյան**

6. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

Հաղ՝ Մարդկային ռեսուրսների կառավարման,
փաստաթղթաշրջանառության և իրավական
ապահովման բաժնի իրավախորհրդատու **Ժ. Սաղոյան**

7. ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի կանոնադրության» հաստատման մասին

Հաղ՝ Ուսանողների աջակցության, բուհ-գործատու

համագործակցության բաժնի պետ **Վ. Էլոյան**

8. **««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գրադարանի կանոնադրության» հաստատման մասին**

Հաղ՝Գրադարանի վարիչ **Գ. Ավետիսյան**

9. **««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կանոնադրության» հաստատման մասին**

Հաղ՝ Ֆինանսական ռեսուրսների կառավարման և
հաշվառման բաժնի պետ **Ռ. Քալաջյան**

10. **««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման բաժնի կանոնադրության» հաստատման մասին**

Հաղ՝ Տնտեսական գործունեության և
ենթակառուցվածքների սպասարկման բաժնի պետ **Ս. Մինասյան**

11. **Հաղորդում 2023-2024 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին**

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի
պրոռեկտոր-տնօրենի ԺՊ՝ **Ն. Ավետիսյան**

12. **Ընթացիկ հարցեր**

Գիտական խորհրդի նախագահ Ե. Սերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը՝ հայտարարեց քվորումի առկայության մասին, քվեարկության դրեց նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց քվեարկության արդյունքում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: (Գագիկ Նիկողոսյանը և Անահիտ Հովհաննիսյանը էլեկտրոնային նամակի միջոցով օրակարգի և դրա հարցերի վերաբերյալ ուղարկել են իր դիրքորոշումը՝ «կողմ» քվեարկելով):

Պարոն Սերոբյանը հաղորդման համար խոսքը տվեց տիկին Մարգարյանին և առաջարկեց նրան առաջին, երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ հաղորդել միաժամանակ և հակիրճ, քանի որ կանոնակարգերը ժամանակին ուղարկվել են Գիտական խորհրդի անդամներին և նախորոք դրանց ծանոթ են:

1. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կանոնակարգի» հաստատման մասին

Տիկին Մարգարյանը ներկայացրեց, որ համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի թերությունների վերացման գործողությունների ծրագրին, գիտության ու հետազոտության զարգացման քաղաքականությանը, համալսարանում գիտահետազոտական նորությունների և առաջնահերթությունների սահմանման ու զարգացման հայեցակարգերին համապատասխան բարելավվել է ՇՊՀ-ի գիտական գործունեության համար տրամադրվող ներբուհական դրամաշնորհի կարգը, որի արդյունքում մշակվել և Գիտական խորհրդում ներկայացվում են երկու նոր իրավական ակտեր. առաջինը՝ համալսարանում գործող գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ, երկրորդը՝ համալսարանում առկա բոլոր գիտահետազոտական ուղղությունների մասով, այն, ինչ որ կատարվել է համալսարանում 2016 թվականից մինչև օրս, այսինքն նրա հաղորդմամբ, այսուհետ կլինի ոչ թե մեկ դրամաշնորհային ծրագրի մրցույթ, այլ երկուսը:

Տիկին Մարգարյանը հակիրճ ներկայացրեց գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ կատարված փոփոխությունները, այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա կատարվել են վերոհիշյալ իրավական ակտերը: Նա նշեց, որ կարգերը իրենց կառուցվածքային առումով տարբերվում են նախկին դրամաշնորհային կարգերից, քանի որ ըստ գործող ընթացակարգերի առանձնացվել են բաժիններ, նաև հիմնական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ տրամադրվող դրամաշնորհը ներդրվել է որպես երկարաժամկետ, այսինքն 24 կամ 31 ամիս ժամկետով, իսկ գիտահետազոտական գործունեության բոլոր ուղղությունների համար տրվող

դրամաշնորհը միջնաժամկետ և կարճաժամկետ է՝ 24 և 12 ամիս ժամկետներով: Նշվեց նաև, որ կարևորելով համալսարանի մեծ թվով աշխատակիցների և ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող դրամաշնորհներում, ավելացվել է հայտը ներկայացնող խմբի անդամների թիվը և հնարավորություն է տրվել թեմաների իրականացնելու ընթացքում փոփոխել խմբի կազմը՝ ըստ անհրաժեշտության: Հստակեցվել և առավել չափելի է դարձել հայտը ներկայացնող խմբի անդամներին ներկայացվող պահանջները, գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի շրջանակում խմբի անդամներին ներկայացվող պահանջները առավել խստացվել են՝ գիտահետազոտական գործունեության արդյունքները միջազգայնացման մակարդակով ներկայացնելու նպատակով: Տիկին Մարգարյանը շարունակեց, որ ներկայացվող կարգերում հստակեցվել են բոլոր ժամկետները և պատասխանատուները, մրցույթի անցկացման ընթացակարգը, հստակեցվել են մրցույթի անցկացման նպատակով ձևավորվող ներբուհական խորհրդի կազմը, աշխատակարգը և այդ պարագայում՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի գործառույթները՝ կարգի շրջանակում նույնպես հստակեցվել է: Հաջորդ փոփոխությունը, որ նշվեց տիկին Մարգարյանի կողմից, դա կարգերում թեմաների շրջանակներում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքների հստակեցումն է, մասնավորապես հստակ ներդրվել են ուսումնառություն-հետազոտություն կապն ապահովող պարտադիր և ցանկալի արդյունքներ, իսկ գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների զարգացումն ապահովելու համար թեմաների շրջանակում իրականացվող հետազոտություններից ակնկալվող արդյունքները առավել խիստ են՝ նորից միջազգայնացման տեսանկյունից, այսինքն հստակ նշված են, որ արդյունքները պետք է ամրագրվեն SJR-ի Q1,Q2,Q3,Q4 քառորդներում ընդգրկված ամսագրերում, դրանք բարձր վարկանիշավորում ունեցող միջազգային ամսագրերն են: Լավարկվել են ինչպես հայտի, այնպես էլ ընթացիկ ու ամփոփիչ հաշվետվությունների ձևաչափերը, արդյունքները ավելի չափելի դարձնելու տեսանկյունից նաև կարևոր փոփոխություններ են տեղի ունեցել հենց հայտերի գնահատումն իրականացնելիս: Դրանք առավել բազմաշերտ և բազմակողմանի դարձնելու ակնկալիքով առանձնացվել և լավարկվել են արտաքին փորձաքննության, ներբուհական խորհրդի գնահատման թերթիկները, ինչպես նաև Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի կողմից ներդրվել է լրացվող թերթիկ, ըստ որի՝ նկատի ունենալով տվյալ հայտի վերաբերյալ համապատասխան ամբիոնի կարծիքը, խմբի անդամների գիտահետազոտական գործունեության ոլորտում ունեցած հաջողությունները և նախկինում իրականացված դրամաշնորհների շրջանակներում պարտադիր և ցանկալի արդյունքների առկայությունն կամ բացակայությունը, տրվում է համապատասխան միավոր:

Պարոն Մերոբյանը անդրադարձ կատարեց տիկին Մարգարյանի հաղորդմանը, նշելով, որ իսկապես, սկզբունքորեն լուրջ պահանջներ են դրված կարգերում և ամեն ինչ արված է, որ հետազոտական աշխատանքները նաև

նպաստեն բուհի գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանը, ինչը շատ կարևոր է այսօր:

Տիկին Մարգարյանը հաղորդեց նաև հիմնադրամի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կանոնակարգի վերաբերյալ, նշելով, որ կարգի վերնագրից սկսած փոփոխության է ենթարկվել, «հավելավճարի» փոխարեն մտցվել է «լրավճար» տերմինը, կարգը հետաքրքիր կլինի նաև ուսանողների համար: Տիկին Մարգարյանը նշեց, որ նախատեսված է կարգի փոփոխությունների մասին առանձին իրազեկում կազմակերպել ուսանողության համար: Ներկայացվող կարգով ուսանողներին հնարավորություն կնձեռնվի ներկայացնել իրենց աշխատանքները, որոնց համար նույնպես լրավճար կտրամադրվի, որը երբևէ չի եղել բուհում, այսինքն հավելավճարը գործել է միայն աշխատակիցների համար, դրանով համալսարանը փորձում է խթանել ուսանողների գիտահետազոտական գրծունեությամբ զբաղվելու գործընթացին: Տիկին Մարգարյանը շարունակեց, որ կարգը փոփոխվել է նաև իր կառուցվածքով, հստակեցվել են գործընթացների բոլոր ժամկետները և պատասխանատուները, ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով ավելացվել է կետ, որի համաձայն պարտադիր է համալսարանի աշխատակից հանդիսացող հեղինակների կողմից տպագրված աշխատանքների ներկայացումը ամբիոնների կողմից կազմակերպվող գիտական սեմինարների ձևով: Ավելացվել է կետ գրագողության բացահայտման դեպքերի հետ կապված, հանձնախմբին լիազորություններ է տրված՝ լրավճար տրամադրելու ընթացակարգի վերաբերյալ: Համալսարանում իրականացվող գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստելու նպատակով լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել են նոր կետեր ևս: Կա փոփոխություն նաև մագիստրոսական աշխատանքների գրախոսման հետ կապված, գրախոսման համար նույնպես սահմանվել է լրավճար: Առանձնակի ուշադրություն է ցուցաբերվում գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ տպագրված աշխատանքների նկատմամբ՝ կիրառելով տարբերակում գործակից 1,1:

Պարոն Սերոբյանը հավելեց, որ վերջապես հստակեցվել է, որ հավելավճար ստանում են ՇՊՀ-ի աշխատակից կամ ուսանող հանդիսացող անձինք, քանի որ ունեցել են դեպքեր, որ նախկին աշխատակիցներն էլ են ստացել հավելավճար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պարոն Լ. Մարտիրոսյանի կողմից դիտարկում կատարվեց, որ համացանցում շատ հայտարարություններ կան գիտաժողովների առումով և մեծ մասը գովզդում է, որ դրանք միջազգային գիտաժողովներ են, հատկապես ռուսական կայքերում, սակայն դրանք իրականությանը չեն համապատասխանում, հեղինակի կողմից որոշակի գումար մուծվում է և առանց գրախոսման՝ աշխատանքը ընդունվում է, հետո եթե դրանք գնահատվում են միջազգային, հեղինակը բավականին մեծ գումար է մուծում:

Պարոն Սերոբյանը նշեց, որ պարոն Մարտիրոսյանի բարձրացրած հարցի հետ ինքը համաձայն է, սակայն տեխնիկական առումով առայժմ հնարավոր չէ ոչինչ ձեռնարկել, սակայն գտնում է, որ գովելի է իրենց աշխատակիցների կողմից

աշխատանքներ ունենալը տարբեր ամսագրերում, այդ թվում նաև ՌԴ-ի ամսագրերում:

Ն. Ավետիսյանը հավելեց, որ Գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող ցանկացած կանոնակարգ բավականաչափ երկար ուղի է անցնում, հանձնաժողովը նիստ է գումարում յուրաքանչյուր կանոնակարգի վերաբերյալ նախագծերի քննարկման պատուհանը փակվելուց հետո, և կարելի է ասել, քննարկումների հորձանուտով է անցնում ցանկացած կարգ:

Պարոն Սերոբյանը առանձին-առանձին քվեարկության դրեց օրակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կանոնակարգ»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝
««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կանոնակարգի» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կանոնակարգ»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝
««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կանոնակարգի» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կանոնակարգ»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Պարոն Սերոբյանը հավելեց, որ հաստատված 3 կանոնակարգերը շատ կարևոր են համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման տեսանկյունից

և դա ռազմավարական կարևոր ուղղությունների խթանիչ փաստաթղթեր են: Ապա պարոն Սերոբյանը պարոն Մելքոնյանին հանձնարարեց առավելագույնս ապահովել պրոֆեսորադասախոսական անձնակազմի նաև ուսանողների իրազեկվածությունը երկու դրամաշնորհային կարգերին, ինչպես նաև աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կանոնակարգին:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ բուհի կառուցվածքային փոփոխության արդյունքում ձևավորվել են նոր ստորաբաժանումներ, հարցը վերաբերվում է ձևավորված բաժիններին, քանի որ կենտրոնների կանոնադրություններն արդեն իսկ հաստատվել են Գիտական խորհրդի կողմից: Հիմնադրամի բաժինների թվով 7 կանոնակարգերի նախագծեր, որոնք փաստաթղթային տեսանկյունից բերված են միասնական տեսքի, կանոնակարգերն ունեն նույն կառուցվածքը, հստակ ձևակերպված են յուրաքանչյուր բաժնի գործառույթները, ենթակայությունները՝ նախօրոք էլեկտրոնային նամակով ներկայացվել են Գիտական խորհրդի անդամներին: : Ապա պարոն Սերոբյանը նշեց, որ դրանց վերաբերյալ մինչ Գիտական խորհրդի նիստի գումարման օրը, այսինքն հնգօրյա ժամանակաշրջանում խորհրդի անդամների կողմից դիտարկումներ չեն ստացվել: Նա մեկ անգամ ևս հարց ուղղեց խորհրդի անդամներին, թե արդյո՞ք նրանց կողմից դիտարկումներ ու լրացումներ չկան:

Դիտարկվեց, որ դրանք ուսումնասիրվել են խորհրդի անդամների կողմից, չկան լրացումներ և առաջարկվեց հաստատման համար դրանք առանձին-առանձին դնել քվեարկության:

4. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի կանոնադրություն»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Որակի ապահովման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Որակի ապահովման բաժնի կանոնադրություն»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի կանոնադրություն»-ը:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

7. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի կանոնադրություն»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

8. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գրադարանի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գրադարանի կանոնադրություն»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

9. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կանոնադրություն»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

10. ԼՍԵՑԻՆ՝

««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման բաժնի կանոնադրության» հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման բաժնի կանոնադրություն»-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

11. ԼՍԵՑԻՆ՝

Հաղորդում 2023-2024 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ համալսարանի գործունեության ծավալման համար կարևոր արդյունք է ընդունելության արդյունքների ամփոփումը: Տիկին Ավետիսյանը դիագրամի միջոցով ներկայացրեց բակալավրի կրթական ծրագրով առկա/հեռակա, ապա մագիստրատուրայի ընդունելության արդյունքները: Նա նշեց, որ 2022-2023 ուտարվանից միասնական մեկ առարկայի քննությունը հանրապետությունում ենթարկվեց փոփոխության և ընդունելության մուտքը դարձավ 2 առարկայով քննություն հանձնելով, որը ՀՀ-ի բոլոր բուհերում բերեց ուսանողների քանակական ցուցանիշի որոշակի նվազեցման: Համալսարանում ևս որոշ կրթական ծրագրերի առնչությամբ գրանցվել են ոչ ցանկալի ցուցանիշներ, և տիկին Ավետիսյանի դիտարկմամբ, սա չի նշանակում, որ պետք է այս հանգամանքը արդարացման միջոց լինի: Տիկին Ավետիսյանը շարունակեց, որ իրենց բուհը որդեգրել է իր բոլոր որոշումների մեջ իրավաչափ գործողություններ, ապա բակալավրի կրթական ծրագրով ընդունելության արդյունքների մասին խոսելիս, դիագրամների միջոցով ցույց տվեց, որ 2021-2022 ուստարում բուհ դիմել են 394, ընդունելության շեմը հաղթահարել են 330 դիմորդներ, 2022-2023 ուստարում բուհ դիմել են 281 դիմորդ, ընդունվել են 196-ը, 2023-2024 ուստարում՝ 316 դիմորդ,

ընդունվել են 215-ը և 2022-2023 ուստարվա համեմատությամբ 2023-2024 ուստարում ընդունվածների թիվը գերազանցում է 19-ով: Սակայն շատ կարևոր է մուտքի միջին ցուցանիշը, այսինքն թե ինչ ցուցանիշներով են դիմորդները ընդունվում, արդյոք՞ մուտքի պայմանները ելքի պայմանների հետ համադրելի են լինում: Նա նշեց, որ համալսարանում 2023-2024 ուստարում 1-2 ուսանողով ձևավորված կուրսերն են հետևյալ մասնագիտություններով. հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի-ի՝ 1 ուսանող, կենսաբանություն՝ 2 ուսանող, աշխարհագրություն՝2 ուսանող, սոցոլոգիա՝ 1 ուսանող: Տիկին Ավետիսյանը նկատեց, որ սա կրթության որակի, և դասախոսների աշխատանքի որակի ապահովման առումով խոցելի է դարձնում բուհը:

Տիկին Ավետիսյանը դիագրամներով ներկայացրեց նաև մագիստրատուրայի ընդունելության արդյունների մասին ըստ մասնագիտությունների. 2021-2022 ուստարում բուհ դիմել են 216 դիմորդ, ընդունվել են 211-ը, 2022-2023 ուստարում դիմել են 219-ը, ընդունվել են 188-ը, 2023-2024 ուստարում դիմել են 245 և հրամանագրվել են 204-ը: Տիկին Ավետիսյանը նշեց, որ համալսարանի ամբիոնների շատ վարիչներ ակտիվ գործունեություն են ծավալել մագիստրատուրայի ուսանողական համակազմի համալրման գործընթացում, ինչը չի կարելի ասել ամբիոնների որոշ վարիչների համար: Ապա նա անդրադարձավ բակալավրի կրթական ծրագրով հեռակա համակարգի ընդունելության արդյունքներին՝ նշելով, որ արդեն 2-րդ տարի է, որ ընդունելությունը իրականացվում է ԳԹԿ-ի կողմից և ասաց, որ նույն պայմաններից ելնելով համեմատությունը տարվել է 2022-2023 ուստարվա և 2023-2024 ուստարիների միջև՝ դրանք ներկայացնելով դիագրամներով: Նա ներկայացրեց, որ 2022-2023 ուստարում բուհ դիմել են 213 դիմորդ, ընդունվել են 98-ը, 2023-2024 –ին դիմել են 234-ը, ընդունվել են 97-ը:

Հաղորդման ավարտին տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ բուհի ռազմավարական ծրագրի և համալսարանի կառուցվածքի համապատասխանության համատեքստում, իրենք արդեն ունեն նոր բաժին՝ Մինչբուհական կրթության կազմակերպման բաժին, որը զբաղվում է դիմորդների հավաքագրման գործընթացով և ինքը հույսով է, որ 2024-2025 ուստարում ընդունելության արդյունքներն առավել բարձր ցուցանիշներ կգրանցեն, հատկապես որ և՛ բաժնի, և՛ ամբիոնների կողմից տարբեր աշխատանքներ են կատարվում մարզի դպրոցների և դիմորդների հետ, որը պարբերաբար լուսաբանվում է համալսարանի կայքում և սոցիալական ցանցերում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2023-2024 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

1.Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր	Ե. ՍԵՐՈԲՅԱՆ
2.Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ	Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ
3.ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
4.Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն	Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
5.Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն	Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
6.Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
7.Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ	Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8.Ռազմական ամբիոնի պետ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
9. Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրեն	Ա. ԴԱՎԻՆՅԱՆ
10.ՇՊՀ արհմիության նախագահ	Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
11.Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)	Ա. ՄԿՈՅԱՆ
12.Պատմ. գիտ. դոկտոր, (ամենաերիտասարդ դոկտոր)	Հ. ԽՈՐԻԿՅԱՆ
13.ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր	Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
14.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ	Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
15.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
16.Որակի ապահովման բաժնի պետ	Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

17.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.	Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
18.Հասարակական գիտությունների ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մանկ. գ.թ., դոցենտ	Լ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
19. Հասարակական գիտությունների ֆակուլտետի սպորտի և արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ	Գ. ԱՂԱՆՅԱՆ
20.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
21.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
22. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ.,դոցենտ	Կ. ՍԱՀԱԿՅԱՆ
23.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
24.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր	Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
25.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի թարգմանչական գործ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Լ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
26. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 3-րդ կուրսի ուսանողուհի	Ե. ՄԻՆԱՍՅԱՆ
27. Հասարակական գիտությունների Ֆակուլտետի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Մ. ԲԵԺԱՆՅԱՆ
28.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեղագործական քիմիա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
29.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Հ. ԱԴԱՄՅԱՆ

30.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի		Մ. ՇԱՐՈՅԱՆ
31.Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 3-րդ կուրսի ուսանողուհի		Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
32. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի		Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
33. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի		Մ. ԱՎԴԱԼՅԱՆ